



ՏԵԹԵՒՍՑՈՒ ՈՒՒՆ ՆՈՒՏՆՈՐԴՆ Է ՄԵՐ

ԺՊ դարը հայ ժողովրդի քաղաքական ծանր շրջաններից մեկն է եղել: Հայաստանը տառապում էր մոնղոլական դժնյա լծի տակ, կործանվել և ոչնչացվել էին մտավոր և նյութական մշակույթի շատ արժեքներ:

Համատարած ավերի և արյունի մեջ հայ ուսումնաստենչ վանականները կարողացան սակայն քանդված մի մենաստանի տեղ ծաղկեցնել մի ուրիշը, և իրենց արյուն-քրքր-տինքով ոռոգելով հողն ու գիրքը, պահպանել մեր հոգևոր մշակույթի արժեքները, ստեղծել նորերը և ցանել գիտության և լուսավորության սերմերը հայ մտքի անդաստանում:

Դրովթյունը մխիթարական չէր նաև Կիլիկյան հայկական թագավորության մեջ, Հայկական իշխանությունը մամլոսկների անդադար արշավանքներից քայքայվել էր, կազմավորվել և ԺՊ դարի վերջերին իսպառվել ընթացիկ: Կաթողիկոսական իշխանությունը անշքացել և անազգեցիկ էր դարձել որոշ եկեղեցականների ձեռքում, որոնք այն ծառայեցնում էին իբրև վահան իրենց աշխարհային ձգտումներին հասնելու, ի մեծ վիշտ և դայրույթ հայության մաքրահոգի զանգվածի, որը թողնում էր արյունոտ և հայու-թյունից օտարացող Կիլիկիան, վերստին համախմբվելու համար պատմական Հայաստանի հողերում, ուր բացի պապենական արյունի ձայնից նրանց կանչում էր նաև Հաղբատում, Սանահինում, Գլաձորում, Տաթևում, Վասպուրականում մշտարթուն հայկական եկեղեցական մտավոր ոգին ու հավատը, որը վառ էր մնացել մահմեդական սրի ու հրի միջից, անաղարտ՝ հունա-լատինական ոտնձգություններից, և պահպանել՝ հայկական հոգու և ավանդությունների մաքուր դիմա-գծերը:

Հայոց լեռնաշխարհի զանազան անկյուններից, ինչպես ձմեռային սառնամանիքից դուրս եկող գարնանային ծիլեր, ծաղկում էին վանք-անապատները՝ կենտրոն լուսավորու-թյան, հայրենասիրության, աշխատանքի ու

նվիրման: «Ձմեռն էանց, այգիք մեր ծաղկեցան և ծաղիկք երևեցան յերկրի մե-րում», — ահա ինչպիսի խոստում բառերով բնորոշվում է այդ դարթունքը:

Ինչ որ չկարողացավ անել հայ իշխաննե-րի սուրբ անմիաբանության պատճառով, թեև հաճախ քաջությունը չէր պակասում նրանց, կարողացավ անել հայ վանականի գրիչը: Հայ եկեղեցին միշտ միասնական ու մի ճակատով հանդես եկավ օտարների և յուրայինների առաջ, դրանով էլ նա կարողա-ցավ լինել կերտողը, պահպանողը և սե-րնդից սերունդ փոխադրողը ոչ միայն մեր մտավոր արժեքների, այլ նաև մշակութային նյութական արժեքների: Չինք սխալվում երբ ասենք, թե հայոց ազատասիրության, բարո-յականության, հայրենասիրության, հոգու անաղարտության, լուսավորության ամենա-զուլալ աղբյուրը հայ եկեղեցին է եղել, որի համար պայքարել են Արևելյան վարդա-պետները թշվառ միջնադարում, և Հայաս-տանը տակավ առ տակավ ծածկել ծաղկուն վանքերով, որոնց պարիսպներից ներս մար-դիկ իսկական ապահովությունից ավելի փնտռում էին հոգեկան անդորրություն: Արե-վելյան վարդապետների գործունեության մեջ առաջին հերթին ուշագրավ էր կրոնա-կան գիտելիքների ծաղկումը, հայ լեզվի, ե-կեղեցական արվեստների մշակումն ու սրանց զուգընթաց, իբրև հայ ապրելու նա-խաձեռնություն և հպարտություն:

Այդ շարժման առաջին նշանները երևա-ցին Մուշում, հետո տարածվեցին Վասպու-րականում, Սյունիքում, Լոռիում բաշխված վանքերում և անապատներում, որտեղ վան-քերը՝ հենված բարեպաշտ ոսպմիկ հայ իշ-խանների հուժկու բազկին և Հայ եկեղեցու սիրով տրոփող սրտի վրա, ղեկավարված հմուտ և նվիրված ուսուցչապետ-վարդա-պետներով՝ ստեղծեցին հոգևոր և աշխար-հիկ կրթություն տվող դպրոցներ: Այդ շար-

ժուժը ուղղված էր նաև օտարամուտ ունի-տոնների դեմ ապահովելու համար հայ ժողովրդի միասնականությունը և Հայ Եկեղեցու անկախությունը: Պապական քարոզչությունը իրեն պարտաված ճանաչելով Կիլիկիայի միջոցով հայերի կրոնական նվաճումը իրագործելու ծրագրում, փորձեց դիմադրություն ցուցնել իր իսկ բուլնի մեջ, բուն Հայաստանում: Կազմակերպվեց Մարաղայի կաթոլիկ եպիսկոպոսությունը: Ստեղծվեց տաղնապալի դրություն Հայ Եկեղեցու և ժողովրդի համար: Հարցականի տակ էր դրված հայ հոգու և հավատքի գոյությունն իսկ Մայր Հայրենիքում: Ունիտոնները իրենց աղճատ հայերենով աշխատում էին մեր մեջ տարածել հայ ժողովրդին իր նախնիներից օտարացնող, եղբայրը եղբոր դեմ զինող մտքեր: Այդ վտանգը առաջ բերեց ուժեղ հակադեղնություն գիտակից հայ մտքերի և մանավանդ Տաթևյան աշակերտության մեջ: Տաթևյան վարդապետների հմուտ և նվիրված մի փաղանգ լծվեց սրբազան պայքարի և աշխատանքի՝ մաքրելու հայ լեզուն օտարամուտ և խորթ տարրերից և ինքնագիտակցություն դարձրեցնելու հայ ժողովրդի մեջ: Հայ հողի վրա, հայ ձեռքերով, հայի համար և հայ Հայրենիքին ու նախնիքներին հարազատ դպրոց, մշակույթ ստեղծելու սրբազան գործը ստացավ մի նոր թափ, որը կարելի է համեմատել միայն Սահակ Մեսրոպյան շրջանի մշակութային գործունեության հետ:

Միջնադարյան վանք-դպրոցներից դուրս եկան ժամանակի մեր նոր գործիչներից շատ-շատերը, որոնք իրենց վարդապետական հմտությամբ պայքարեցին Հայ Եկեղեցուն և Ազգին սպառնացող վտանգների դեմ՝ հայ հոգին անաղարտ և հայ կյանքը խաղաղ պահելու համար: Այդ գործիչները Հայաստանի արյուն-ավերով մթափած ձորերում, հայ կյանքի ու մշակույթի պահպանման համար զինվեցին իրենց մահկանացու մարմնի և անմահ հոգու բոլոր զենքերով և ուստեցին հալածարմար ծառայել մեր նախնիներից ավանդ մնացած գիր ու գրականության, վարք ու բարքին, ազգային իդեալներին, և սրի ու հրի միջից, անթաղ դիակների միջից, սովի ու ծարավի ժանիքների մեջ անդամ գուրգուրացին հայ մշակույթի վրա և լուսավորեցին հայ ժողովրդին միտքն ու հոգին, և սրբացան իրենց սուրբ գործերով Հայոց Եկեղեցու և մշակութային պատմության առաջ:

Միջնադարյան բազմաթիվ վանք-անապատներում փայլեց «Իբրև դարեգակն ի կորնթարդն վերին», «երկրորդ Աթենք և մայրաքաղաք ամենալին իմաստից» Գլաձո-

րի հռչակավոր համալսարանը Վայոց Ձորում, հիմնված Պոռչ իշխանի օրոք: Գլաձորի դպրոցի հիմնադիրն էր Ներսես Մշեցին, 1280 թվին, որից հետո ուխտի մեծ քարունապետը դարձավ Եսայի Նշեցին, ժամանակի գիտնականներից մեկը, որը տիրապետում էր մի շարք լեզուների և ուսումնասիրել էր անտիկ հունական գիտությունն ու փիլիսոփայությունը: Ժամանակակիցները նրան անվանում են «եռամեծ փիլիսոփայ», «վանմական, անյաղթ հետադուր»: Նշեցուն հաջորդեց Հովհան Որոտնեցին, որը համալսարանի ղեկավար դառնալուց կարճ ժամանակ հետո, քաղաքական պայմաններից հարկադրված, աթոռն ու դպրոցը փոխադրեց Տաթև: Պետք է նշել, որ վանք-դպրոցները կարճ կյանք էին ունենում քաղաքական անհաստատ պայմանների հետևանքով, բայց գործիչների բուն եռանդը, ծայր աստիճան նվիրումն ու հավատը իրենց գործի նկատմամբ, միշտ էլ հասնում էր իր նպատակին: Ղեկն նախորդ դպրոցի քանդման մոլեխն ու փոշին չհանգած, բարձրանում էին նորի պատերը և նույն սուրբ ոգին շարունակում էր անընդմեջ ապրել ու ստեղծագործել տեղահան վանականների նոր կացարանում:

Տաթևի վանքը իր դպրոցով, Որոտնեցու աշակերտ Գրիգոր Տաթևացու օրոք հասնում է իր բարձրագույն աստիճանին և դառնում է զինանոց ունիտոնների դեմ պայքարի, միջնաբերդի հայ ուղղափառ դավանանքի և ուսմանքի: Տաթևացին իր ճարտար լեզվի, տոկուն բնավորության և խորը գիտության միջոցով պատրաստում էր իր աշակերտներին և իր հոգեշունչ քարոզչությամբ լուսավորում էր ժողովրդի միտքն ու հոգին: Տաթևացու քարոզագրքերի «Ամարան» և «Զմերան» հատորները այսօր էլ ընն կորցրել իրենց նշանակությունն ու արժեքը հայ Եկեղեցականի համար: «Ծոֆնալոյս վարդապետ» այսօր էլ գործածական է իր հեղինակություններով սնվող և զինվող հայ հոգու ծարավը զգացող Եկեղեցական և աշխարհական հայերի բերնում:

Մեծ քարունապետ Գրիգոր Տաթևացին պատրաստեց աստվածաբաններ, մատենագիրներ, գիտնականներ, մանկավարժներ, նկարիչներ, երաժիշտներ, որոնք, համախմբված իրենց մեծաշունչ ուսուցչապետի հովանու և առաջնորդության տակ, իրենց անձնդիր վաստակի արգասիքը նվիրաբերում էին Հայ Եկեղեցուն և հայ ժողովրդին: Նրանք կենդանի օրինակներ էին քրիստոնեական մաքուր կյանքի, պարզության, հավատի և սիրո:

Գրիգոր Տաթևացին իր ժամանակի Արևիկյան վարդապետների, և ամբողջ հայ ժո-

դոլորդի հուլիսի և ձգտումների խտացումն էր, կրոնական և քաղաքական մարզերում հավասարապես: Նա Տաթևը դարձրեց լուսատու փարոս և Հայաստանյայց Եկեղեցու ուղղափառության ամրոց: Տաթևացիին և նրա աշակերտները պաշտպանեցին հայ ժողովրդի հավատն ու խղճի աղատությունը, և Հայրապետական Աթոռը իր աստանդական վիճակից վերջնական կերպով վերադարձրին իր աստվածադրոշմ վայրը:

550 տարի է անցել այն օրից, երբ Տաթևի հավատավոր ու համեստ վանականները հոգին հանձնեցին հայրենաշունչ և հրեշտակակրոն իրենց մեծ ուսուցչապետի սուրբ աճյունը: Նրա լուսաշող հոգին սակայն, որը սավառնում էր հայոց աշխարհով մեկ, մինչև հիմա էլ ներքին անշիջանալի բոցավառությամբ լուսավորում ու ջերմացնում է հայ հավատավոր հոգիները: Գրիգոր Տաթևացին այսօր էլ մեզ հետ է, մեր աղոթքներում, մեր ուսումնասիրություններում, մեր լեզվի ու մտքի ստեղծագործություններում, մեր Հայրենիքի վերելքի և Եկեղեցու միասնության համար մղած պայքարում: Նրա վառած հավատի, լուսավորության, գիտության ջահը միշտ անշեջ է մնացել, անկեղ մորենու պես, և նրա դրոշմը այսօր էլ խորն է ու անջնջելի հայ հոգու վրա: Ոչ մեկ օտար ձեռք չի կարողացել եղծել կամ դալկացնել Տաթևյան այդ դրոշմը, որը հայ ժողովրդի համար ժա-

ռանգական բնագդ, մարմին ու արյուն է դարձել սերնդից սերունդ:

Տաթևացու գործը անմահ է և նրա ոգին մշտագո մեր մեջ: Նրա հիշատակը այսօր թող զարթեցնի մեր մեջ որդիական սիրո ամենաջերմ զգացումներ հանդեպ մեր անցյալի բազմախոց, բայց այսօր վերածնված Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Մայր Հայաստանի: Մենք էլ, մեծ սրբի նման, իմանանք սիրել ու գնահատել մեր ժողովրդի ստեղծած հոգևոր արժեքները, որպեսզի կարողանանք մեր հարազատ մոր խանդավառ աչքերից կաթած մի շիթ արցունքն ավելի բարձր գնահատել, քան աշխարհի բոլոր մարգարիտներն ու գանձերը:

Այսօր էլ Տաթևացու ոգին առաջնորդն է մեր: Նա հավիտենական լույսի աշխարհից չի խնայում իր աղոթքն ու օրհնությունը՝ միշտ հավատալով, որ իր թողած գործը շարունակվում է նույն ոգով և իր վառած լույսով ու ջերմությամբ: Հայ ժողովուրդը իր սրտում պահում է Տաթևացու ոգին, աչքերը միշտ հառած դեպի Ս. Էջմիածին և Մայր Հայրենիք, «ուստի եկեսցէ փրկութիւն», որով մեր տարանջատված գոյությունը վերածվելու է միասնության և երջանկության:

Խունկ անուշության, սրտի բուրվառով, քո անվան և հիշատակին, սուրբ և յոթնալույս վարդապետ, անմահ Գրիգոր Տաթևացի:

ՍԱՆԴՐՈ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԵՀՐՈՒԴՅԱՆՑ

